

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«ՉԱՆԳԵՉՈՒԲԻ
ՊՂՆՁԱՄՈՒԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 1, 2018

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՒՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№1, 2018

*Նվիրվում է Հայաստանի առաջին Հանրապետության 100-րդ, Արցախյան շարժման 30-րդ ու
Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-րդ ամյակներին*

*Dedicated to the 100th anniversary of the First Republic of Armenia, the 30th anniversary
of the Artsakh movement and the 2800th anniversary of the founding of Erebuni-Yerevan*

*Посвящается 100-летию Первой Республики Армения, 30-летию Арцахского движения и
2800-летию основания Эребуни-Ереван*

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2018

*Չրատարակության Է երաշխավորվել Երևանի պետական Չամալսարանի գիտական խորհրդի թիվ 2/8.8 առ 29.11.2018թ. որոշմամբ
 Рекомендовано к публикации решением учёного совета №2/8.8
 от 29.11.2018г. Ереванского государственного университета
 Recommended for publication by the Yerevan State University
 Academic Council Decision №2/8.8 of November 29, 2018*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Նախագահ՝ ԵՊՅ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արամ ՄԻՍՈՆՅԱՆ

Անդամներ՝

ԱՎԱԳՅԱՆ Արծրուն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԱՎԱՆԵՍՅԱՆ Հրանտ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԲԱԲԱՅԱՆ Դավիթ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
 ԲԱԼԱՅԱՆ Վահրամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԳԱԼՍՏՅԱՆ Խաչիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
 ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Զուլիխան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԳՐՈՒՂԵՎ Վլադիսլավ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
 ԴԱՆԻԵԼՅԱՆ Գևորգ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Արման, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
 ԺԵՅՄՈ Մարտիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
 ԼԱՊԵՎԱՎ Վալենտինա, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
 ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆՆՑ Օտտո, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
 ՀՈՎՍԵՓՅԱՆ Մուշեղ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԴԱԶԻՆՅԱՆ Գագիկ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ՄԱՐԿՈՍՅԱՆ Աշոտ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
 ՄԻՆԱՅԱՆ Էդիկ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ՆԵՐՍԻՍՅԱՆ Կարեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
 ՍԱՐԳՍՅԱՆ Հայկ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
 ՎԱՍԿՈՎ Մաքսիմ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
 ԶԵՌՅԱՆ Գարիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 ԶՈՂԱՐՅԱՆ Տիգրան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Գիտական Արցախ, №1, 2018, Երևան, «ԱԵԳՄՍ» հրատ., 2018, 448 էջ:
 Scientific Artsakh, №1, 2018, Yerevan, «UYSSA» publ., 2018, 448 pages.
 Научный Арцах, №1, 2018, Ереван, Изд. «ОМУСА», 2018, 448 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 1-ին համարում տեղ են գտել հայկական արդի հիմնախնդիրներից մեկի՝ պետականության վերաբերյալ Հայաստանը, Արցախը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիան, Լեհաստանը և Բելառուսը ներկայացնող հեղինակների գիտական աշխատանքները:

Գիտական պարբերականում գետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2018թ. սեպտեմբերի 13-16-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

The first issue of «Scientific Artsakh» journal comprises the scientific works of authors from Armenia, Artsakh, the United States of America, Germany, Poland and Belarus on one of the most urgent problems for Armenians – the statehood. The publication also contains the best scientific articles of the 3rd international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 13-16, 2018 in Stepanakert.

В первом номере журнала «Научный Арцах» нашли место научные работы авторов из Армении, Арцаха, Соединенных Штатов Америки, Германии, Польши и Беларуси по одной из актуальных для армян проблем – государственности.

В издании размещены также лучшие научные статьи 3-ей международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 13-16 сентября 2018 года в Степанакерте.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Rector of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Members:

AVAGYAN Artsrun, Doctor of Philology, Professor
AVANESYAN Hrant, Doctor of Psychology, Professor
BABAYAN David, Doctor of History, Associate Professor
BALAYAN Vahram, Doctor of History, Professor
DANIELYAN Gevorg, Doctor of Law, Professor
GALSTYAN Khachik, Doctor of Political Sciences, Associate Professor
GHAZINYAN Gagik, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
GRUZDEV Vladislav, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
GYULAMIRYAN Julieta, Doctor of Pedagogical Sciences, Professor
HOVSEPYAN Moushegh, Doctor of Philology, Professor
KERYAN Garik, Doctor of Political Sciences, Professor
KOCHARYAN Tigran, Doctor of Political Sciences, Professor
LAPAEVA Valentina, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
LUCHTERHANDT Otto, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
MARKOSYAN Ashot, Doctor of Economic Sciences, Professor
MINASYAN Edik, Doctor of History, Professor
NERSISYAN Karen, Candidate of Economic Sciences, Associate Professor
SARGSYAN Hayk, Doctor of Economic Sciences, Professor
VASKOV Maksim, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
YEGHIAZARYAN Arman, Doctor of History, Associate Professor
ZEJMO Marek, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Candidate of Law, Associate Professor

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: ректор ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор Арам СИМОНЯН

Члены:

АВАГЯН Арцрун, доктор филологических наук, профессор
АВАНЕСЯН Грант, доктор психологических наук, профессор
БАБАЯН Давид, доктор исторических наук, доцент
БАЛАЯН Ваграм, доктор исторических наук, профессор
ВАСЬКОВ Максим, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
ГАЛСТЯН Хачик, доктор политических наук, доцент
ГРУЗДЕВ Владислав, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
ГЮЛАМИРЯН Джульетта, доктор педагогических наук, профессор
ДАНИЕЛЯН Геворг, доктор юридических наук, профессор
ЕГИАЗАРЯН Арман, доктор исторических наук, доцент
ЖЕЙМО Марек, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
КАЗИНЯН Гагик, академик НАН РА, доктор юридических наук, профессор
КЕРЯН Гарик, доктор политических наук, профессор
КОЧАРЯН Тигран, доктор политических наук, профессор
ЛАПАЕВА Валентина, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
ЛЮХТЕРХАНДТ Отто, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
МАРКОСЯН Ашот, доктор экономических наук, профессор
МИНАСЯН Эдик, доктор исторических наук, профессор
НЕРСИСЯН Карен, кандидат экономических наук, доцент
ОВСЕПЯН Мушег, доктор филологических наук, профессор
САРГСЯН Гайк, доктор экономических наук, профессор

Главный редактор: кандидат юридических наук, доцент Аветик АРУТЮНЯН

*Տպագրվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ
Is published with the support of the Ministry of Sport and Youth Affairs of the Republic of Armenia
Публикуется при поддержке Министерства спорта и по делам молодежи Республики Армения*

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
JOURNALISM, LITERATURE
ЖУРНАЛИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ԱՐՑԱՆԵՅԱՆ ՄՈՏԻՎԸ Մ.ՅՈՎԻՄԱՆՆԻՍՅԱՆԻ
«ՅԵՌԱՅՈՂ ԵՐԿՐԻ ԿԱՐՈՏԸ» ԳՐԵՈՒՄ

ԱԼԽԱՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայ գրականությանը նոր ու ինքնատիպ դրսևորումներ ունեցավ Արցախյան շարժման և պատերազմի, ինչպես նաև զինադադարի հաստատման շրջանում: Արցախյան պատերազմն արդի հայ գրականությունը հարստացրեց նոր թեմաներով, գրական հերոսի նոր կերպարով (Լևոն Խեչոյան «Սև գիրք, ծանր բզեզ» (1999), Յովիկ Վարդույան «Կանթեղ» (2010), Մաքսիմ Յովհաննիսյան «Մենք» (1989), Նվարդ Սողոմոնյան «Կարկառներ» (2010) և այլն): Այս ժամանակահատվածում ծնունդ առած վավերագրական արձակը՝ որպես ժանր, լավագույնս դրսևորվեց Մաքսիմ Յովհաննիսյանի գրչի տակ: Վավերագրական և գեղարվեստական ժանրերի համադրությամբ, գրող-իրապարակախոսը բանաձևում է արցախյան ֆենոմենոլոգիան: Թե՛ գրողի, թե՛ լրագրողի, և թե՛ պարզապես հայ մտավորականի ակնկալիքները, ձգտումներն ու երազանքները շաղկապելով իր ժողովրդի ճակատագրական ժամանակաշրջանի պահանջի հետ, Մ. Յովհաննիսյանն արձանագրեց դժվար, բայց հերոսական մի տարեգրություն, որի կերտման ճանապարհին ոգու և հոգու համարձակությունն էր պետք: Հր. Մաթևոսյանի բնութագրմամբ նա դարձավ «Բանի գեներալ»: «Հիանալի է,- գրել է Հր. Մաթևոսյանը,- որ մեր խոսքի ավելորդության, մեր ժամանակի անցածության, ուրվագծվող նոր ժամանակներից մեր էպոխայի հեռանալու բոլոր օրերում Մաքսիմ Յովհաննիսյանը չի լքել խոսքի ապաստարանը, չի լքել հավատը՝ թե՛ մենք և մեր խոսքն ավելորդ ենք, և թե՛ ուրվագծվող նոր աշխարհը պատկերի է գալիս ըստ մեր խոսքի»¹:

Մ.Յովհաննիսյանի հաջողության կարևոր գրավականը կայանում է նրանում, որ ապրում է իր ծննդավայրում, նկարագրում հայրենակիցների դժվարին ապրուստն ու ակնկալիքները, ռեալիստորեն բացահայտում նրանց հարուստ ներաշխարհը, առանձնապես՝ պատերազմի և հետպատերազմյան բախտորոշ ժամանակաշրջանում: Նրա «Յեռացող երկրի կարտոը» խորհրդանշական վերնագիրը կրող ժողովածուն անկախության շրջանի հայ գեղարվեստական արձակի լավագույն գործերից է: Նրանում տեղ գտած վիպակներն ու գրույցներն ընդհանրացնում են 1994թ. զինադադարից հետո ոչ պատերազմ, ոչ խաղաղություն անկայուն իրավիճակում գտնվող արցախյան իրականությունը, որտեղ մարդկանց վերաբերմունքն ու պատկերացումները կյանքի մինչ այդ գոյություն ունեցող բարոյական արժեքների վերաբերյալ, խրախուսական չեն: Ղարաբաղցին յուրացնելով բոլորովին օտար, ոչ իր քիմքին հարիր մարդկային փոխհարաբերություններ, կարծես կորցնում է իր ինքնատիպ տեսակը: Ժամանակաշրջանը ճիշտ գնահատելու ունակ գրողը ծանրակշիռ դիտարկումներով և հիմնավոր ընդհանրացումներով իր մտահոգությունն է

¹ Յովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատոր, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, Ստեփանակերտ, 2006թ., էջ 516:

արտահայտում երկրի, ժողովրդի, Նոր հայ մարդու, և ընդհանրապես՝ մարդու բարոյահոգեբանական արժեքների փոփոխության նկատմամբ: «Կռոճ» վիպակի հերոսները ճշգրտորեն ներկայացնում են արցախյան արդի ժամանակաշրջանի իրական պատկերը, երբ երեխայի «մատնաբարի տալու» նման մի անմեղ առաջարկ կարող է իրարանցում առաջացնել՝ խիստ արժեքավոր դարձնելով Չախմախբարի անտեսված հողակտորը: Յեղիհակը, երկու, անգամ երեք ժամանակների պայմանական անցումներում «Խորհրդային ժամանակաշրջան, Արցախյան պատերազմ, հետպատերազմական ժամանակաշրջան» ներկայացնում է մարդուն՝ ազգային և սոցիալական հեղափոխության մեջ: Խորհրդային հասարակարգում ապրած, արցախյան պատերազմով անցած, պայմանական խաղաղության անկայուն իրավիճակում գտնվող երկրի քաղաքացին «իշխանություն-իշխանավոր՝ անցողիկ բաների», ինչպես նաև սոցիալ-հասարակական անբարենպաստ պայմանների պատճառով թողնում է իր իսկ «արյամբ շաղախված» հողը և ապաստան փնտրում Ալթայում կամ մեկ այլ երկրամասում: «Ժամանակի հետ չափանիշներն էլ են փոխվում» և «ամեն ինչ հարաբերական է» ձևաչափի մեջ Համգայի հոգոցը տեղին է հնչում. «Մարդը ինչ էր ուզում, ինչի հասցրին»¹:

Մ. Հովհաննիսյանը, ձեռքը դնելով կյանքի զարկերակին, տալիս է Արցախի ներկա իրականության ճշգրիտ պատկերը: Արցախը, որն արձակագրի համար հայրենի բնօրրան լինելուց զատ վաղուց արդեն դարձել է աշխարհայացք, իր գրական հունձքի կարևոր ու յուրօրինակ աղբյուրը, այսօր արդեն Նոր երանգներ է ձեռք բերում: Յեղիհակն իր մտահոգություններն է արտահայտում թե՛ իր երկրի քաղաքական-հասարակական, թե՛ իր ժողովրդի սոցիալ-հոգեբանական, թե՛ մարդկային փոխհարաբերությունների փոփոխության և այդ ամենից առաջացած իրարանցման շուրջ: Երեկ նկուղներում պատսպարված, այսօր արդեն մասնավոր սեփականատեր դարաբաղցու Նոր տեսակն իրեն այն երկրի տերն է համարում, որի համար արյուն թափած տղաներն իրենց ստորացված ու արհամարված զգալով, հեռանում են, թողնելով իրենց երկիրը: Փող կուտակած «կուլակ»-գյուղացիներն էլ իրենց երեխաների համար բնակարաններ են ձեռք բերում քաղաքում՝ դատարկելով գյուղերը: Այս և նմանատիպ մտահոգություններով է արձակագիրն արտահայտում իր «հեռացող երկրի» կարոտը:

Նրա թեմատիկ ընդգծվածության մեջ առանձնահատուկ տեղ ունի արցախյան ներկա իրականությունում տեղ գտած և օրեցօր ավելի լճացող բացասական երևույթների արտացոլումը, որը խիստ տարբերվում է դարաբաղցու ավանդական կենցաղավարության, սովորությունների ու հոգեբանության առումով: Մաքսիմ Հովհաննիսյանի հերոսները ժամանակների համեմատականում իրենց և շրջապատի կյանքով ու կենսակերպով տալիս են «շեղված ժամանակների» ճշգրիտ պատկերը: Համանուն վիպակի հերոսները, երեկ դարաբաղի հասարակական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառների կարևոր դեմքեր լինելով, այսօր անգործ, թռչակի «կոպեկները հաշվող» ուստա Սերոբի «վուլկանիզացիա» յուրօրինակ ակումբի «Նարդի» խաղացողներն են: Նրանք ասել-խոսելով, ծիծաղելով ու ձեռ առնելով արձանագրում են այն իրողությունը, թե ինչ էին, ինչ դարձան: Սակայն նրանց մտահոգությունը, ցավն ու հիասթափությունը նեղ անձնական լինելով, իր մեջ ներառում է համագայինի տարրեր: Յեղիհակի մտահոգությունը Ղարաբաղի և դարաբաղցու ներկա իրականությունն է, որտեղ «Դժգոհելու համար Նյուլթի պակասություն չի լինում»²:

¹ Հովհաննիսյան Մ., Երկեր, Հինգերորդ հատոր, «Վաչագան Բարեպաշտ» իրատ., «Սոնա» գրատուն, Ստեփանակերտ, 2015թ., էջ 258:

² Նույն տեղում, էջ 294:

Յեղիակալը երկու տարբեր սերնդի ներկայացուցիչների՝ ուստա Արմենակի և երիտասարդ Արամիկի երկխոսության միջոցով բարձրաձայնում է հիմնախնդիրների մասին, որոնք հիմնավորում են դարաբաղում դարաբաղցի չմնալու ողբերգությունը: Երկիրը դատարկվում է գների թանկացման («Օրինակ, գները՝ զագից սկսած մինչև շուկայում վաճառվող մի փունջ կանաչի»¹), խիստ ցածր թոշակ-աշխատավարձերի («Ոնց որ էլի պոչը՝ ոչ երկարում են, ոչ էլ կարճանում»²) պատճառներով, ինչպես նաև աշխատատեղերի կրճատման և մի շարք սոցիալ-հասարակական խնդիրների հետևանքով և «վայ նրան, ով դրսում մարդ չունի»: Գրքում տեղ գտած վիպակներում ազգային և համամարդկային տարաբնույթ հիմնախնդիրների հոլովություն մարդու հոգու ընդգծումների, մտահոգությունների, ցավերի ու հիասթափությունների ընդհանրության մեջ Մ. Յովհաննիսյանը հանգում է նրան, որ մարդկությունը գնում է դեպի կործանում, աղետը համաշխարհային է: Եվ «Մի հարցրու ինչու, որովհետև պատասխան չունեն» եզրակացությամբ արձակագիրը որպես վերնագիր է ընտրում «Յեղացող երկրի կարոտը» գրքի վերջին, թվով չորրորդ վիպակի համար: Այստեղ ևս ժամանակների անցումային զգայաչափով հեղինակը իր հերոսի՝ Սեդրակի կերպարում ցույց է տալիս ներկա իրականության ավանդական հայի ձևափոխված, նոր տեսակը: Թերևս պատահական չէ, որ հերոսն ապրում է հորհրդային հասարակարգի, Արցախյան պատերազմի և հետպատերազմական խառնակ ժամանակների հեղափոխությունը: Եվ, եթե սովետի ժամանակ նա մենատնտեսի հոգեբանությամբ ստիպված էր մտնել «կոլխոզ», պարտադրված պատերազմում ներկա գտնվել, ապա սեփականատերերի ու բիզնեսմենների ներկա ժամանակաշրջանում հեշտությամբ գտնում է իր տեղը («Ձեռներեցության մարմաջը կլանել էր նրան»³): Սեդրակի կերպարի մեջ լավագույն ձևով արտահայտվում է ժամանակի ոգու իրական պատկերը («Նա հովազի նման, որ ցատկից առաջ պրկում է մկանները, վստահ է, որ զոհն իր ճակկերում կլինի»⁴): Սեդրակն էլ «Քառս»⁵-ի հերոսների նման հայտնվելով դարաշրջանի կեղտի՝ փողի ազդեցության տակ, մոռանում է ընկերներին ու բարեկամներին, անգամ հին պարտքի մասին, որը հենց ինքը՝ հերոսը, համեմատում է «Չիմզիմովի մուրհակի» հետ:

Եվրոպական բարբերի ներթափանցումը հայ իրականությունն այնքան էլ բարենպաստ չեղավ: Այլ վարք ու բարք ունեցող, արժեքային այլ սանդղակով առաջնորդվող դարաբաղյան հասարակությունը կլանված փորձում է յուրացնել այն, ինչն իրենը չէ: Թերևս սա է պատճառը, որ հայ ընտանիքում մեծացած երիտասարդը ինչքան էլ փորձում է նյութով լցնել իր հոգու դատարկությունը, այնուամենայնիվ, հարազատների, ընկերների ու բարեկամների անտարբերության պատճառով «ավելորդության զգացումը ամբողջովին պատում է նրան»: Սեդրակի հակապատկերն է նրա կինը՝ Ասպրամը, ում բարոյական կերպարը հակասում է ամուսնու անբարո կերպարին: Եթե Սեդրակը յուրացնում է բարոյագրված իրականության ոգու քաղաքականությունը, ապա Ասպրամը ցավով ու հիասթափությամբ է մտածում նյութապաշտ ու քաղթենի ամուսնու մտքի և արարքների բարոյագրվման մասին. «Ոչ մի զոջում, մեղավորության զգացում: Խղճի վրա ոչինչ չի ծանրացել, ճանապարհին քար կա՝ շրջանցիր կամ հրիր մի կողմ: Ինչպես կարելի է այդպես ապրել: Ինչպես ապրել նման տեսակի մարդու հետ»⁶:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 355:

⁴ Նույն տեղում, էջ 374:

⁵ Շիրվանզադե Ա., Բաբու, 1898թ.:

⁶ Յովհաննիսյան Մ., Երկեր, Զինգերորդ հատոր, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, Ստեփանակերտ, 2015թ., էջ 393:

Ընդհանրապես՝ Մաքսիմ Զովհաննիսյանի հերոսներն ու հերոսուհիները, անկախ իրենց սեռից, տարիքից, արհեստավոր, կամ արվեստագետ լինելու հանգամանքից, աչքի են ընկնում իրենց ինտելեկտով, կրթվածությամբ ու զարգացվածությամբ: Նրանք կայացած, ինքնուրույն, կյանքում իրենց տեղը գտած ժամանակակից մարդու կերպար են: Զայ գրականության մեջ հայ կինը խելքի, իմաստության, խոհեմության և շատ այլ ազգային և մարդկային կարևոր արժեքներով առանձնահատուկ տեղ է գրավում: Սակայն Մ. Զովհաննիսյանի առաջ քաշած հայ ժամանակակից կնոջ, մասնավորապես՝ դարաբաղցի կնոջ կերպարը (Զեղուշ, Ասպրամ, Լիլի) նորույթ է հայ նորագույն շրջանի արձակի մեջ: Ի դեմս Ասպրամի, հեղինակը առաջ է քաշում հասարակական գործունեությամբ զբաղվող դարաբաղցի կնոջ կերպարը: Ի տարբերություն Սեդրակի կերպարի, Ասպրամի կերպարը ամբողջական է, ինչպես և Սեդրակի սիրուհու Լիլիի կերպարը, ով ևս ժամանակակից, կիրթ, գործունյա կնոջ տեսակ է: Այս կանայք անցյալ չունեն, ունեն ներկա և այդ ներկան չի բավարարում նրանց: «Վերջերս հաճախ եմ հիշում Սեն-Սանսի «Կարապի մահը»: Ինչու չեմ կարող ասել», - նշում է Լիլին:

Մ.Զովհաննիսյանի ստեղծած կանացի կերպարները անկախ իրենց հասարակական և սոցիալական կարգավիճակից հայ ավանդական կնոջ (Վերծինե տատ, Սոնա) զարգացած տեսակն են, նրանք չեն մոռանում իրենց ազգային պատկանելությունը և նրանց երջանկության չափորոշիչը առողջ ընտանիք ունենալու մեջ է («Ասպրամը ընտանեկան ջերմություն էր տենչում, Սեդրակից իզուր է այդ սպասում»¹): Սեդրակի կերպարը ևս նորույթ է անկախության շրջանի հայ գրականության մեջ: Նա նոր հայ մարդու կերպարն է մարմնավորում: Գրքում իր ուրույն տեղն ունի «Վկայություններ» բաժինը: Այստեղ հեղինակը նովելային հետաքրքիր պատկերներ է բացում ընթերցողի առաջ: Մարդ-սյուժե կտրվածքում հեղինակը ուշադրությունը կենտրոնացնում է արցախյան ներկա իրականության բացասական երևույթների վրա, որի արդյունքում խաթարվում է հայի, մասնավորապես՝ դարաբաղցու նկարագիրը: Ղարաբաղցին շարունակում է իր գոյապայքարը, և, եթե պատերազմի ժամանակ գիտեր թշնամին ով է, գնում էր նրա դեմ, «հիմա չգիտի դեմը կանգնածը թշնամի է, թե բարեկամ: Եսպես ապրելը անհնարին է դարձել»: Երկրի քաղաքական, սոցիալ-հասարակական անբարենպաստ պայմանները հային խոցելի են դարձնում արտաքին թշնամու առաջ: Ժամանակային տարբեր ընդգրկումների մեջ, հերոսների վերհուշի, երկխոսության, ներքին մենախոսության, հեղինակային խոսքի և այլ գեղարվեստական միջոցների օգնությամբ Զովհաննիսյանը խոսում է ժամանակաշրջանի և մարդու հոգեբանության փոփոխությունների մասին:

Պարտադրված պատերազմում հայտնված հայն ինքնական զենքը վերցրեց և պայքարեց հայրենի երկրի լուսավոր ապագայի համար: Նրանցից շատերը, որ «պատմությամբ հերոսներ» են, նահատակվեցին, թողնելով իրենց անունները, այսօր հիշվում են միայն «հանդիսավոր հավաքների ժամանակ»: «Անսպասելի վայրիվերումների ու շրջադարձերի» նոր ժամանակներում ասպարեզ եկան նոր հերոսներ, որոնք անսպասելի, անգամ իրենց համար, սկսեցին երկիր դեկավարել և խոսել երկրի անունից: Երկիրդ թողնում հեռանում ես՝ «վայ է, մնում ես՝ էլի վայ է»: Գրողն առաջնայինը համարում է հասարակական ինչեղություն ունեցող, իրատապ ու կենսական նյութը, ինչից և հանգում է կերպարակերտման և հոգեբանական բացահայտումների հիմնարար դրույթներին: Անցյալ-ներկա-ապագա փոխկապակցության մեջ, իրականի ու երևակայականի համադրմամբ՝ Մ. Զովհաննիսյանին հաջողվում է ստեղծել ժամանակի ընդգրկուն պատկերը: Նրա երկերում կարևոր տեղ են գրավում հերոսների վերհուշը, ինքնաբացահայտման

¹. Նույն տեղում, էջ 393:

հոգեբանական երանգը: Պատմվածքներում օգտվելով կոմպոզիցիոն տարբեր ձևերից ու միջոցներից, Նա հասնում է մարդու հոգևոր աշխարհի ցուցադրմանը:

Մաքսիմ Զովհաննիսյան-գրողի ինքնատիպությունը պայմանավորված է ոչ միայն ժանրային ու թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, զգացմունքների բնականությամբ, այլև կենդանի, գունեղ լեզվատճական առանձնահատկություններով: Գրողն իր ասելիքն ամփոփելով բովանդակալից շարադրանքում, բաց տարածություններ չի թողնում: Նրա լեզվի հարստությունը շարունակաբար ճյուղավորվում է, նպաստում յուրօրինակ ոճի դրսևորմանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն բարբառային բառերն ու բառակապակցությունները, ժողովրդական առած-ասացվածքները, հետաքրքիր համեմատությունները, որոնք առավել վառ գույներ են հաղորդում նրա պատումներին:

Ալիսա Բաղդասարյան
ԱՐՑԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
«ՋԵՌԱՑՈՂ ԵՐԿՐԻ ԿԱՐՈՏԸ» ԳՐՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *Արցախ, պատերազմ, ազգային կերպար, իրականություն, կարոտ*

Սույն հոդվածում ուսումնասիրվում և արժևորվում է տաղանդավոր գրող Մաքսիմ Զովհաննիսյանի «Ջեռացող երկրի կարոտը» գիրքը, որտեղ արտացոլվում է Արցախի և արցախցու անցյալի ու ներկայի իրական պատկերը, արցախյան բառ ու բանով:

Անցյալ-ներկա-ապագա փոխկապակցության մեջ, իրականի ու երևակայականի համադրմամբ՝ Զովհաննիսյանը տալիս է ժամանակի ընդգրկուն նկարագիր: Նա գտնվելով կյանքի բնական հոսքի մեջ, լավագույն ձևով զգալով ժամանակի շունչը, ստեղծում է հետաքրքիր գրականություն: Նրա երկերում կարևոր տեղ են գրավում հերոսների հիշողությունները, ներքին մենախոսությունները, վերիուշը, երևակայությունը, երկխոսությունները և այլ կոմպոզիցիոն միջոցներ, որոնց օգնությամբ հեղինակը հասնում է մարդկային հոգևոր աշխարհի բացահայտմանը:

Alisa Baghdasaryan
THE MOTIF OF ARTSAKH IN THE BOOK OF HOVANNISIAN'S
«LONGING FOR LEAVING THE COUNTRY»

Keywords: *Artsakh, war, national type, realnost, yearning*

The article is devoted to the book of the gifted writer M. Hovhannisyanyan «Longing for Leaving the Country». It expresses the complete scene of the present and future of Artsakh and its people through Karabakh folklore.

The author pays special attention to those stories which reflect the will and determination of freedom-loving Artsakh people, their dream to live in the independent historical homeland.

In the past-present-future relation, comparing the real and the imaginary, Hovhannisyanyan gives a complete description of time. He is in the real flow of life, feeling the spirit of the time, and creates an interesting literature. In his compositions the memories of heroes, interior monologue, memory, imagination, dialogues and other compositional means occupy an important place by which the author reaches the disclosure of the human mind.

Алиса Багдасарян
АРЦАХСКИЙ МОТИВ В КНИГЕ М.ОВАННИСЯНА
«ТОСКА ПО УХОДЯЩЕЙ СТРАНЕ»

Ключевые слова: *Арцах, война, национальный типаж, реальность, тоска*

В данной статье рассматривается и оценивается книга талантливого писателя Максима Ованисяна «Тоска по уходящей стране». В ней отражается реальная картина прошлого и настоящего Арцаха и арцахца, с применением фольклора.

В центре внимания автора статьи те рассказы, в которых автор отражает силу воли свободолюбивого арцахца с его мечтой жить на своей независимой исторической родине. Во взаимосвязи прошлое-настоящее-будущее, сопоставлением реального и воображаемого, Ованнисян дает полное описание времени. Находясь в реальном потоке жизни и наилучшим образом чувствуя дух времени, он создает интересную литературу. Важное место в его композициях занимают воспоминания героев, внутренний монолог, память, воображение, диалоги и другие композиционные средства, при помощи которых автор достигает раскрытия духовного мира человека.

8. **Ավանեսով Հովիկ** – Մեսրոպ Մաշտոց համալսարանի (ՄՄՐ) դասախոս, ԱԵԳՄՄ անդամ
Avanesov Hovik - Lecturer of Mesrop Mashtots University (MMU), member of UYSSA
Аванесов Овик - преподаватель Университета Месроп Маштоц, член ОМУСА
E-mail: hovikavanesow@gmail.com
9. **Ավետիսյան Սուսան** – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (ՇՏՀ) դասախոս, տ.գ.թ., դոցենտ
Avetisyan Susan – Lecturer of Shushi Technological University (ShTU), Candidate of Economics, Associate Professor
Аветисян Сусан – преподаватель Шушинского технологического университета (ШТУ), к.э.н., доцент
E-mail: susanna-avetisyan00@mail.ru
10. **Աֆյան Նադեժդա** – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) դասախոս, տ.գ.թ.
Afyan Nadezhda - Lecturer of Armenian State University of Economics (ASUE), Candidate of Economics
Афян Надежда – преподаватель Армянского государственного экономического университета (АГЭУ), к.э.н.
E-mail: nafyan@rambler.ru
11. **Բալայան Չինաիդա** - ԱրՊՀ դասախոս, ք.գ.թ., դոցենտ
Balayan Zinaida – Lecturer of ASU, Candidate of Philology, Associate Professor
Балаян Зинада - преподаватель АрГУ, к.ф.н., доцент
E-mail: zinaida.54@bk.ru
12. **Բալայան Նինա** – ՇՏՀ մագիստրոս, ԱԵԳՄՄ անդամ
Balayan Nina - Master of ShTU, member of UYSSA
Балаян Нина - магистр ШТУ, член ОМУСА
E-mail: balayan96@mail.ru
13. **Բալայան Վահրամ** - Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր
Balayan Vahram - Vice-Chairman of National Assembly of the Republic of Artsakh, Doctor of History, Professor
Балаян Ваграм - вице-спикер Национального собрания Республики Арцах, д.и.н., профессор
E-mail: vahrambalayan@mail.ru
14. **Բալասանյան Գրիգոր**- ԵՊՀ դասախոս, ԱԵԳՄՄ անդամ, պ.գ.թ., դոցենտ
Balasanjan Grigor - Lecturer of YSU, member of UYSSA, Candidate of History, Associate Professor
Баласанян Григор - преподаватель ЕГУ, член ОМУСА , к.и.н., доцент
E-mail: grigorbalasanjan@mail.ru
15. **Բաղդասարյան Ալիսա** - ք.գ.թ.
Baghdasaryan Alisa – Candidate of Philology
Багдасарян Алиса - к.ф.н.
E-mail: sasun.81@mail.ru

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
JOURNALISM, LITERATURE
ЖУРНАЛИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

- Ալիսա Բաղդասարյան.** Արցախյան մոտիվը Մ.Յովհաննիսյանի «Չեռացող երկրի կարոտը» գրքում.....380
Alisa Baghdasaryan. The Motif of Artsakh in the Book of Hovannisian's «Longing for Leaving the Country»
Алиса Багдасарян. Арцахский мотив в книге М.Ованнисяна «Тоска по уходящей стране»
- Արսեն Առաքելյան.** Պետություն՝ պետության մեջ.....386
Arsen Arakelyan. The State in State
Арсен Аракелян. Государство в государстве
- Շուշան Խաչատրյան.** Արցախը հեղինակավոր պարբերականների էջերում (գերմանական մամուլի օրինակով).....391
Shushan Khachatryan. Artsakh on the pages of authoritative publications (on the example of the German press)
Шушан Хачатрян. Арцах на страницах авторитетных изданий (на примере немецкой прессы)
- Շուշան Խաչատրյան, Գալուստ Սարոյան.** Անկախ Հայաստանի սոցիալ-քաղաքական խնդիրները՝ ըստ ժամանակակից գրողների պատմվածքների.....395
Shushan Khachatryan, Galust Saroyan. Socio-Political Issues of Independent Armenia Based on Short Stories by Contemporary Writers
Шушан Хачатрян, Галуст Сароян. Социально-политические проблемы независимой Армении согласно рассказам современных писателей
- Գայանե Ավագյան.** «Հայրենիք» և «պետություն» գաղափարները 1960-ական թթ. լիբանանահայ մամուլում.....400
Gayane Avagyan. The Concepts «Homeland» and «State» in the Armenian Press of Lebanon in the 1960s
Гаянэ Авагян. Понятия родины и государства в армянской прессе Ливана 60-х годов 20-го века
- Անուշ Դոլուխանյան.** Հայկական դիրքերի գրավման լուսաբանումը արցախյան և ադրբեջանական պաշտոնական մամուլում.....405
Anush Dolukhanyan. Illustration of the Capture of Armenian Positions in Artsakhi and Azerbaijani Official Press
Ануш Долуханян. Освещение захвата армянских позиций в арцахской и азербайджанской официальной прессе